



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԵՄԲԱԳԻՐ
ԶԱՐԺԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻԿԵՅԱՆ

Բ. ՏԱՐԻ

« ՇԱԲԱԹ, 29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1911 »

ԹԻ 42

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աւետարանը եւ քաղոյականի դասը
Ս. ԳԻՐՔԷՆ ՅՈՒՔԵՐ. — Ծիածանը եւ Աթուր
ԹԵԼԱԴՐԻՉ ՊԱՏԱՌԻԹԻՒՆՆԵՐ. — Կամեցողը կարող է
«Անձր տեղ ինք առաւապեցաւ»
«Խոստումն պահեցի»
ՀԱՅ ՔԱՀԱՆԱՆ. — Ա. Իր նիւթականը (2.)
ՅՈՒԼԻՈՍ ԵՒ ՊԱՄՓԻԼԻՈՍ. — Առաջին Քրիստոնեա-
ներու ժամանակուան պատմութիւն (Շար.) ԼԷՐՆ ԹՈԼՍՏՈՅ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան կարեւոր լուրեր

ԲԱՅԳԷՆ ԵՊԻՍԿ.
ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԳԱԼԷՄԵԱՆ
Թարգմ. Անգլիերէնէ
ԶԱՐԺԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ



« ՏԱՃԱՐ »-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
գիմել առ Զարմայր Բահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեշկըաւ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمنى كلپاسانده « داجار » غزتمسى مديرى پاپاس زارماير افندى
Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktaçhe, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՌ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրիստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ ԵՐ ԿԱՆԽԻԿ ԵՆ
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Իստանպոլի տարեկան	40 դրու
Արշաւանի մասի համար	» 10 Ժրանգ
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օսլար
Ձեռք կը ծախուի արակը	40 փարա

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՌ» ԿՐԾՆԱԹԵՐԹԻ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բէնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բէնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաթիթեան
ՍՏԱՄԲՈՒԼ. — Տ. Գաթիթեան Բէնյ. Պողոս-
ԱՏԱՌԱՋԱՐ. — Տ. Սերոբէ ք. Պոլսեան
ԵԱՆՈՒՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բէնյ. Տօնէլեան
ԲԱՐԵՐԴ. — Մ. Սառսեան Լ. Բ.
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարսէն Եպս.
Կիւլէսեան
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութեան Բէնյ. Սար-
գիսեան
ԵՕՁԱՍ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.
Դիմաքսեան
ԵՐՁՆԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Եղիշէ
Բէնյ. Սրաման
ՁՄԻԻՌԻՍԱ. — Տ. Յարութեան Բէնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բէնյ. Տ.
Գալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջն. Փոխանորդ Տ. Ներսէս
Ա. Բէնյ. Վահանեան
ԿԻՐԱՍՈՆ. — Տ. Սրապիոն Բէնյ. Ալլաեան

ՀԱԼԷՊ. — Տ. Մկրտիչ Բէնյ. Մուրատեան
ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բէնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐՁՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բէնյ. Պիպիեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բէնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ. — Յարութեան ք. Աստարազեան
ՊՐՈՒՍԱ. — Առաջն. Տեղապահ Տ. Վար-
դան Ս. Վ. Գաթիթեան
ՊԱՆՏՐՄԱ. ՊԱԼԷՔԻՍԻՐ. — Տ. Կուսմի Բ.
Ֆիդաթեան
ՊԱՆՏԱՍ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիքեան
ՌՈՒՍՏՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բէնյ. Մըմ-
նիկեան
ՌՈՏՈՅԹ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Ասլանեան
ՍԵՐԱՍԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէօփիլէ Բէնյ. Օտապազեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բէնյ. Թախմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմիսիոս Բէնյ. Տրէդ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ Լ. Բ. Մովսէս-
եան
ՏՐԱՊԶՈՆ. — Առաջնորդ Տ. Սերոբէ Վ.
Սափուլեան
ՓԱՐԻՁ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պետ Բէնյ. Բիպարեան
ՔԼԻ. — Առաջնորդ Տ. Պաակ Վրդ.
ՅԻՔԶՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐԹՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

«ՇԱԲԱԹ, 29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1911»

ԹԻԻ 42

ԱԻԵՏԱՐԱՆԸ

ԵՒ

ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԴԱՍԸ

ՏԻԿ. Ա. ԹԵՈԴՈՍԻՍԻ ԱՐԴԻ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ՝
ԴԱՍԱԳԻՐՔԻՆ ԱՌԹԻԻ

Տիկ. Արչակունի թէ՛ յգիկ թողորովին նոր կամ արդիական ըմբռնումով պատ-
րաստած է «Արդի բարոյագիտութիւնը»
Միջին եւ Բարձրագոյն Ա. Գառնաբանե-
րու համար եւ արդէն՝ Ազգ. Կեդր. վար-
չութեան կրօն. Ժողովոյ գնահատու-
թեամբ, ի միջի այլոց, այս դասագիրքն
ալ պաշտօնապէս յանձնարարուեցաւ ուղ-
րային վարժարաններու, Տեղապահական
չրջաբերականով: Նոյն ատեն եւ ալ հեղի-
նակէն օրինակ մը նուէր ընդունեցի Արդի
Բարոյագիտութեան եւ, ուշադրութեամբ
աչքէ անցուցի զայն, եւ պէտք կ'զգամ
յայտարարել թէ իր ծրագրին հաւեւանս
լաւ պատրաստուած գործ մըն է այս նոր
դասագիրքը:

Հեղինակը կը յայտարարէ թէ այս
դասագիրքը պատրաստելու ատեն՝ աչքի
առչելու ունեցած է ֆրանսացի, անգլիացի
ու գերմանացի բարոյագէտներու գործերէն

չառեր, եւ ասոնցմէ նախապատուութիւն
տուած է Ժիւլ Բայեօի «Բարոյագիտու-
թիւնը դպրոցին մէջ» անուն ամենավեր-
ջին երկասիրութեան, եօթը տարուան մեջ
պատրաստուած երկասիրութիւն մը, ա-
ռանց սակայն կոյր զկուրայն հետեւելու
ատոր կամ բառական թարգմանութիւն
մը ներկայացնելու, այլ պաշաճանցուցած
է զայն Հայ կեանքին:

Հայ վարժարաններու համար դասա-
գիրք պատրաստել ամենէն դժուար աշխա-
տութիւն մըն է, եւ բարոյագիտութեան
դասագիրք պատրաստելու գործը ո՛չ միայն
Հայոց համար, այլ առհասարակ մանկա-
վարժութեան տեսակէտով եթէ ոչ ամե-
նագոյնար, դոնէ ամենափափուկ աշխա-
տութիւն մըն է:

Ի՞նչ է Բարոյագիտութիւնը: Անշուշտ
բառին ամենէն բնորոշակ իմաստով բա-
րիկն գիտութիւնը պիտի ըլլայ: Արդ՝ ԲԱ-
ՐԻՆ հին կամ նոր կ'ըլլա՞յ: Ճշմարտու-
թիւններ անփոփոխի չի՞ն, յաւիտեան-
կան չի՞ն: Եթէ ասոնց պատասխանը ԱՅՈ՛
է ասանց վարանումի, եւ արդի բարոյա-
գիտութիւն բացատրութեամբ կ'ուզէի հա-
կընալ ԲԱՐԻՆ ուսուցանելու նոր կամ
արդի մեթոտը:

Իսկ բարոյագիտութեան նիւթը պէտք

է կազմեն մեծ ճշմարտութիւններ եւ ազգային-ընկերական կեանքը շօշափող հոգեբանական իրողութիւններ :

Արդիականութիւնը իր մէջ կը բովանդակէ այն զաւթները , որ աշխարհաքաղաքացի կ'ընէ մարդիկը : Ընկերվարական սկզբունքներն ալ ուղղուած են այդ միեւնոյն նպատակին : Ազգային կամ ցեղային մասնաւորութիւններ , յատկութիւններ նշանակութիւն չունին : Մարդիկ ապրելու են ինքնիշխան , հաւասար պայմաններու մէջ : Նախապաշարում է ցեղերու այլազանութիւնը , ինչքերու կամ հարստութեան մասնաւորումները , ամուսնական կապերու սեփականութիւնները , կրօնքներու գոյութիւնը , եւն . եւն : Մարդ ազատ է եւ պէտք է ապրի միշտ աւրդի , միշտ նոյն բմբունումներով : Եւ այսպիսի բմբունում մը կեանքի եւ կենցաղի համար , ըստ իս յիպուածապաշարութիւն է , բոլորն ամենալայն նշանակութեամբ : Բայց գիպուածապաշարութիւնը կթէ բան մը կ'արմէ երբեմն վարչական կամ քաղաքական կեանքի մէջ , չեմ կարծիր որ ընտիր ըստուգանիշ մը ըլլայ այն բարոյականի համար :

Իմ համոզումով բարոյականը , հետեւարոր եւ բարոյագիտութիւնը չկրնար զիպուածապաշար ըլլալ :

Ուրեմն եւ կը հարցնեմ . ի՞նչ պիտի ըլլայ Հայոց , այսինքն՝ Հայ Ազգին կրթութեան եւ գաստիարակութեան նկարագիրը , քառաքեղը . — Անիկա պէտք է ըլլայ ազգային հիմուն վրայ միշտ յառաջդիմական : Այս սկզբունքով եւ կը խորհիմ , որ ո՛չ միայն Հայ Ազգին կրթութեան եւ Դաստիարակութեան ծրագիրը , այլ նաեւ գաստագիրքերն եւ հայ կրթիչներն ու գաստիարակները պէտք է համաձայն ըլլան այդ սկզբունքի վրայ :

Հայ Ազգին պատմական կեանքը անվիճելի իրողութիւններ ունի , որոնք Ազգին Բարոյականը կը մարմնացնեն իր յոսի եւ լաւ կողմերով : Այդ պատմական կեանքը հիմ պէտք է ըլլայ մեր արդի կրթութեան եւ գաստիարակութեան՝ նըպատակ ունենալով յառաջդիմութիւնը :

Եթէ մենք մեր աղաքները Հայ պիտի կրթենք ու գաստիարակենք , լա՛ւ , չչեղենք չիտակ ճամբէն , այսինքն տանք այն կրթութիւնն ու գաստիարակութիւնը , որ ազգային նկարագիր ունի : Եւ այդ նկարագիրը կ'արտափայլի Ազգին արիւնէն , լեզուէն , մասենազրութենէն , կրօնքէն , արուեստներէն , բարքէն ու վարքէն , աւանդութիւններէն , մէկ խօսքով այդ ազգին լման պատմութիւնէն , որ իր մէջ կը խտայնէ ազգային ինք՝ ուրոյնութեան բոլոր պայմանները :

Այս խորհրդածութիւնները կրնան շատ հետեւները տանիլ մեզ , բայց եւ կը բաւականանամ այսչափով՝ զոյց տալու համար , թէ սխալ է ազգային բմբունում մէկդի դնել՝ երբ մանաւանդ բարոյական գաստիարակութեան կամ բարոյագիտութեան վրայ է խնդիրը :

Եւ Արդի Բարոյագիտութիւնը եթէ այս բմբունումով հայացուէր , բոլորովին կատարեալ գործ մը պիտի ըլլար : Դաստիարար , ինչպէս բոլոր վերեւ , ի՛ր ծրագրին հաւանանք լաւ պատրաստած գործ մըն է , բայց այդ ծրագիրը կատարեալ ըլլալու համար պէտք էր ազգային ըլլալ :

Եւ , օրինակէ համար , ինչո՞ւ կրօնք , կամ աւելի պարզ բացատրութեամբ , Աւեստանը ամենեւին նկատի առնուած չէ Արդի Բարոյագիտութեան մէջ :

Ստույգ է որ բարոյագիտութիւնը Գրիտունական կամ կրօնքի գաստագիրք չէ : Ասի շատ ճիշդ է : Արդէն եւ ալ այս իմաստով չէ՛ որ թերի կը գտնեմ Արդի Բարոյագիտութեան ծրագիրը , այլ այն հասկըցողութեամբ , որ եւ չեմ կրցած հաշտուիլ դեռ կրօնքի բարոյականին եւ կրօնքէ անկախ բարոյականին մը գոյութեան հնարիչներուն եւ ջատագովներուն հետ :

Կ'ըսեն թէ կրօնքի բարոյականը գատ է , բարոյականը գատ է :

Իմ ուսումնասիրութիւններս եւ փորձառութիւններս կ'ըսեն , որ բարոյականը մէկ է սկզբունքով . կրօնքներն ալ դարձեալ սկզբունքով մէկ մէկ գրութիւններ են բարոյագիտութեան : Կեղծիք է ըսել

թէ կրօնական կամ ոչ-կրօնական բարոյականներ կան զատ զատ : Նորէն կը կրկնեմ, բարոյականի ուսուցման տարբեր տարրեր մեթոտներ կամ գրութիւններ կան : Խօսքս միշտ սկզբունքի վրայ է :

Այսօր կրօնքը մէկդի դնելով՝ կրօնքէ անկախ բարոյական մը քարոզողներ, ըստ իս, կը սխալին : Քրիստոնէութեան մասին խօսելով, անոնք որ չեն ընդունիր Քրիստոնէութիւնը, եւ անկէջ անկախ բարոյականի մը գոյութիւնը կը դաւանին, ըստ իս կը սխալին, ճիշդ անոր համար որ քառոյականը մեկ է :

Այսօրուան քաղաքակրթութիւնը ծնած է քրիստոնէական, լաւ եւս Աւետարանական մեթոտով կրթուած սերունդներու յառաջընթացով : Որչափ ալ մարդիկ ազատ խորհելու իրաւունքով եւ արդիւնքով քրիստոնէական հաւատալիքներու դէմ ընդդէմ ըլլան, նոյն իսկ այդ բոլորը ոչնչութիւն համարելով, սակայն կամայ ակամայ ազդուած են Քրիստոնէական Բարոյականէն : Աւետարանը իւր 20 դարերու կեանքով ազդած է մինչեւ ուղղ եւ ծուծը քրիստոնեայ մարդկութեան : Ան արեւի պէս ճառագայթած է եւ կը ճառագայթէ : չուզողները թող ըսեն՝ արեւը մեր վրայ չէ՝ ճառագայթած կամ թող չճառագայթէ : Այսպիսի պնդում մը կարելի չէ :

Այսօրուան քաղաքակրթութիւնը, ըսի, ծնունդն է Քրիստոնէութեան : Հապա, պիտի պատասխանէք, ոչ-քրիստոնեայ քաղաքակրթութիւնը, զոր օր. Ճաքոնիս — Օ'հ, Ճաքոնիս, պիտի ըսէիք որ չքաղաքակրթուեցաւ քրիստոնեայ Եւրոպայի եւ Ամերիկայի ազդեցութեան տակ : Պիտի ըսէիք որ նոյն իսկ Ճաքոնի կրօնքը, իր հոգեբանութեամբ անհաղորդ մնաց քրիստոնեայ աշխարհներու հոգեբանական ազդակներուն : Ես չեմ կարծիր : Իրողութիւնը սա է որ Ճաքոն արթնցաւ, լուսաւորուեցաւ քրիստոնեայ աշխարհներու քաղաքակրթութեան ազդեցութեան տակ :

Ազգերու կեանքին վրայ մեծ դեր խորունկ ազդեցութիւններ ունին իրենց կրօնքները : Քաղաքական կամ դիւանագիտական կազմակերպութիւններն իսկ

չառ անգամ եղած են կրօնագետութիւններ, այն իսկ պատճառով որ բարքերն ու վարքերը, քառոյականը կրօնական մեթոտով ուսուցուած էր :

Հայ Ազգին պատմական կեանքը առանց կրօնքի չէ եղած, եւ արդի կեանքն ալ առանց կրօնքի չըլլար : Բաղարձակ ինքնախարութիւն մըն է պնդելը, թէ «եւ կարեւորութիւն չեմ տար կրօնքի, եկեղեցի չեմ երթար, կարճ խօսք, ես ամէն յարաբերութիւն կ'որոշեմ եւս կրօնական ըսուած խօսքերէն եւ գործերէն» :

Բայց, ինչպէս ըսի ընդհանուր քրիստոնէութեան համար, մասնաւորապէս ալ խօսուելով Հայոց մասին, կ'ըսեմ. — Հայերը, նոյն իսկ իր ամենէն ճեղքնակ զաւակներով, ուղին չուզեն, Հայ-Քրիստոնեայ են, որովհետեւ Հայ Ազգին զաւակներն են եւ Հայ ազգը քրիստոնէութեան կամ Աւետարանի ուսուցումով առած է իր բարոյագիտութեան դարաւոր եւ փառաւոր դասերը :

Այս տեսութեամբ պիտի ըսեմ, որ նոյն իսկ Արդի Բարոյագիտութիւնը, ըլլայ այն ժիւլ Բայեօի գրածը, ըլլայ Տիկին Ա. Թէոդիկի հայացուցածը, քրիստոնէութեանէն կամ Աւետարանէն անկախ չէ, թէ եւ ոչ մէկ պիտի նուիրուած ըլլայ հոն, թէ Աւետարանը ինչ կ'ըսէ այս կամ այն բարոյական խնդրի մասին :

Այո՛, դասագիրքին Եօթներորդ Մասը «Կարեւոր հարցեր, Կրօնք եւ Խղճմանք» խորագրին տակ ազուր բաներ կը սորվեցնէ կրօնական ներողամտութեան մասին, եւ գեղեցիկ խօսքերու շարքերուն մէջ (ԼՂ 128, 209, 210) կրօնքի եւ Աւետարանի մասին ընտիր քանի մը սողեր կան : Բայց, կ'ըսէի ինքնիրենս, արդեօք ամբողջ Նոր Կտակարանի մէջ բառ առ բառ առնելիք չունի մը գեղեցիկ խօսք չկա՞ր այս արդի դասագիրքին համար : Մարգարէներու եւ բարոյագէտներու շարքին մէջ յիշուելու արժանի դէմք մըն ալ չկա՞ր այդ դարաւոր գիրքերուն մէջ եւ դարաւոր Հայ Եկեղեցւոյն եւ պատմական Ազգին մէջ :

Քանի որ «Բարոյագիտութիւնը պար-

տականութեան եւ պարտականութեանց գիտութիւնն է», հեղինակին խօսքով (Յառաջաբան), պիտի չսորվեցնէինք մեր պզտիկներուն թէ պարտաւոր են սիրել իրենց կրօնքը, իրենց եկեղեցին։

Բարոյագիտութեան հիմն դասաւորւելը Անձ, Ընկեր եւ Աստուած գոյութիւն ունի կը սորվեցնէին պարտականութիւնները։

Երբ հիմայ Հայ Ազգին զաւակներուն այնչափ բան չսորվեցնենք կրօնքէն, կըրօնքի բարոյականէն, որչափ կը ներեն Բարոյագիտութեան դասաւորւելի մը սահմանները, կոտարեալ կրնայ ըլլալ բարոյականի դասը։

Տիկին Ա. Թէոդիկ, որ տնային անբարոյականութիւններու մարմնացումներ տեսնուի կիլիկիոյ «Ազէտաւայրը», եւ հետեւաբար հիանալի ստիժներ ունեցաւ ուղղակի չօչափելու եւ զգալու Հայ-Քրիստոնէին բարոյականը այդ տիեզերացունց նախնիներուն անքաւելի անբարոյականութեան մէջ, անշուշտ իբր ներաշնչին ուսումնասիրող, բարոյագէտի եւ հոգեբանի աչքերով ուշադիր եղաւ, թէ ի՞նչպէս Հայը ուժաւորուած է Աւետարանի մեթոտով իրեն ուսուցուած բարոյականէն։ Հարկաւ անգրադատնալով Ատանայի մէջ ջարդածող Հայու պատմական կեանքին այ, տեսաւ թէ քանի՞ քանի՞ այդպիսի արխաններէ եւ սուրհրէ եւ կրակներէ անցած է այս նահատակ Հայութիւնը՝ կոթնելով իր բարոյագիտութեան դասաւորւելի Աւետարանին, եւ զայն դասաւորուող դպրոցին՝ եկեղեցւոյն։

Ես հազար անգամ խօսած եւ գրած եմ, թէ Աւետարանը հաստատութիւններու գոյութիւն մը չէ լոկ, այլ նաեւ գործնական կեանքի կանոն մը, բարոյագիտութեան գիրք մը։ Ո՛ր եւ է կրօնք եւ այդ կրօնքին Սուրբ-Գիրքը՝ երբ ո՛ր եւ է կապ չունին ապրումով կեանքին հետ, շատ նշանակութիւն չունին ասոնք։ Աւետարանը գործնական կեանքի հետ գերազանցազէտ հապ ունեցող Սուրբ-Գիրքն է, եւ անժխտելի ոյժերէն մէկը եղած է Հայու ազգային կեանքի պահպանութեան ալ։

Հետեւաբար մեր բովանդակ գիտակցութեամբ եւ տնային համոզումով պէտք է գնահատենք այս պատմական ճշմարտութիւնը, յարգենք զայն եւ սորվեցնենք մեր ուսանող սերունդներուն ալ, թէ իրենց պարտքն է սիրել Աւետարանը եւ Հայ եկեղեցին։

Այսպիսի ոգի մը զնել հայ տղու կըրթութեան եւ դաստիարակութեան մէջ, շատ օգտակար պիտի ըլլար անշուշտ մեր ազգին համար։ Զգուշանանք աշխարհաքաղաքացիներ պատրաստելէ մեր զաւակները, որոնք ոչ մէկ բանի պիտի կրնան ծառայել։

Հայ ազգը պէտք ունի շեշտուած ազգային-յառաջդիմական կրթութեան եւ դաստիարակութեան։ Մի՛ վախճաք Աւետարանէն, Հայ եկեղեցիէն։ Ասոնք կըրթական յառաջդիմութեան համար իրաւան գործութիւններ եղած են մինչեւ հիմայ եւ միշտ պիտի ըլլան։ Վասն զի մեր եկեղեցիները նոյն իսկ իրենց արժանիքով եւ գրամներով կեանք կուտան մեր գլորոցներու պահպանութեան։

Սորվեցուցէք մեր տղոց, նոյն իսկ Արդի Բարոյագիտութեան սկիզբը, թէ նախնական մարդիկ ի՞նչչափ վայրենի էին եւ անկաւար, նոյն իսկ իրենց բնաւորական կալմուածքով։ Բայց լա՛ւ սորվեցուցէք անոնց նոյն ատեն, թէ որչափ բարեբար ազգեցութիւն ունեցաւ Աւետարանը մարդոց բարոյական կատարելագործութեան վրայ։

Անգամ մը Վեհ. Խորհման կը հարցնէ Ա. Ահարոնեանի, թէ ի՞նչպէս կը բացատրեն մարդուն ծագումը Տարվին եւ ուրիշներ։ Ահարոնեան կը պարզէ անոնց տեսութիւնները, թէ մարդը կենդանական ծագում ունի — Այո՛, կ'ըսէ Խորհման, լրաւունք ունին անոնք, ստոյգ է որ մարդուն մէջ կան ամէն տեսակ գաղանային կիրքեր, եւ Աստուածորդի մը պէտք էր այս կիրքերը զսպելու եւ ազնուացնելու համար։ Ահարոնեան խանդավառուած Հայրիկի այս սրախօսութեան, կ'ըսէ. — «Կրօնքի եւ գիտութեան այսչափ գեղեցիկ հաշտութիւն, սքանչելի

է»։ Չեմ գիտեր այս խօսակցութեան ճշգրիտ քերականը, բայց այդ է արտայայտութիւնը, որ ամէն ողջմիտ եւ ազգասէր Հայու արտայայտութիւնը պէտք է ըլլայ բնական, սկսելով դպրոցական դրասեղաններէն։

Ահա թէ ինչե՞ր, լսել տուաւ ինձ Տիւրքիւն Ա. Թէոփիլի Արդի Բարոյագիտութիւնը։ Եւ վստահ եմ որ ըսածներս պիտի ընդունուին իբր անկեղծ թելադրութիւններ, կատարելագործելու համար դասագիրք մը, որ հայ աղուն պիտի սորվեցնէ իր պարտականութիւնները, եւ իր բոլոր պարտականութիւնները։ Եւ հեղինակը իր փորձով ցոյց կուտայ, թէ ինչոր ձեւնաւ է իր ձեռնարկած գործը հասցընելու այդ կատարելութեան։

Յաջողութիւն ուրեմն։

ԲԱՐՔԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

1911 Հոկտեմ. 8, Անկիւրիս
(Կարմիր-վանք)

ՍՈՒՐԲ ԳԻՐԲԷՆ ՑՈՒՔԵՐ

ԾԻԱԾԱՆԵՐ ԵՒ ԱԹՈՌԵ

(Յայտ. Դ. 3-4)

Հին եւ նոր կտակարաններու մէջ զգայուն եւ խորհրդաւոր կերպով նկարագրուած են Աստուծոյ երեւումները մարդուն։ Ընդհանրապէս այդ երեւումներուն երկիւղ եւ միանգամայն հոգեկան անդորրութիւնը եւ ուրախութիւնը ամբողջ պարբեր կ'ընկերանան Այս պարտական ազատացող օրինակներէն մին է Պատմութիւնը։

Այդ կոյսի մը նման պճնուած ու գեղատեսիլ կղզիին մէջ Յարուցեալն Քրիստոս կ'երևի Յովհաննէս առաքելային։ Տիրոջ եւ իր բազմած փառքի ամբողջ վրայ, «Յասպոյ եւ Սարգիոնի» սկանց նման շողողուն երեւումը կը շլորեցնէ առաքելային աչքերը, կը կտակեցնէ անոր մարմին եւ սրտին աղնիւ ու արագ գործունէութիւնը, եւ ահա այդ ակնախ-

աղ ամբողջ շուրջը բոլորուած կը տեսնուի ծիածան մը որ կը մեղմացնէ անոց փայլը եւ տեսանելի կ'ընէ զայն։ Աթոռ Աստուծոյին արդարութեան եւ զօրութեան այդ խորհրդանշը՝ ծիածանով, աչքներէն սիրոյ եւ զթաթեան խորհրդանշովը կը շրջապատուի։ Այս երկու խորհրդանշները աւետարանական առումով անբաժան են իրարմէ։ Ենթահայ ինչպէս նաեւ բնութեան կարգերուն մէջ ամբողջ բով ծիածանը, արդարութեան քով զթաթիւնը, եւ մահուան քով կեանքը կը փառլ շարունակ, ու այս՝ բացարձակ ու անժխտելի ճշմարտութիւն մը է։

Այս ճշմարտութիւնը ի յայտ կղզայ արարչութեան գործերուն վերջը։ Աթոռ Բնութեան մէջ կ'երևի տեսանելիօրէն, իսկ Աստուծոյին զօրութիւնը եւ մեծ վայելչութիւնը հոն սոսկալի եւ յուսահատեցողիչ հանգամանք մը ունին։ Հոս յորդած գետեր ամեն տեղ աւեր ու քանդում առաջ կը բերեն, հոն կատաղի փոթորիկներ մէկ ակնթարթի մէջ կ'ոչնչացնեն հունձը եւ կութը, հուսա երկինք կը գոռայ կատաղաբար, կայծակը կը կայծակէ որսաղնդաստ, հաւնա հրաբուխները կը բռնակին, կը ժայթքեն կրակ ու բոց, ու կը շարունակուին երկրաշարժներն եւ փոթորիկները սոսկաւորելով։ Աստուծոյին զօրութեան այս յայտնաբերութեան առջեւ մարդ ահ ու սարսափի մօտեւած՝ կը զղայ իր փոքրութիւնն ու ոչնչութիւնը։ Բայց ահա ամբողջ շուրջ կը փայլի ծիածանը։ Կանխաւ տեսնուած զէպքերէն եւ սոսկալի աղաներէն օրհնեալ Նիսիսներէն կը ծնին, եւ մարդը հանգաբար ու կազդուրուած էր գտնէ ինքզինքը։ Կատաղի փոթորիկները՝ կը մաքրեն օդը, լաւազած ջուրերը կը հանգաբար եւ երկիրը հողի բարեբար խառով մը կը ծածկեն։ Երկրաշարժի ցնցումներն յերան բեկորների հեռագհեալ կը մշակուին եւ երկրին եզակեան զեղեցկութիւնն ու հարստութիւնը կը կազմեն։ Լաւ փնտռէ՛, մօտէն գիտէ՛, եւ պիտի տեսնես որ Բնութեան մէջ Աստուծոյին զօրութեան բոլոր յայտնաբերութիւններն ու երեւումները սիրոյ գործ

մը կը պարփակին իրենց մէջ. հոն ձեռք ձեռքի տուած են ոյժն ու զթուփունը յոյզն ու յոյսը, սէրն ու փառքը. եւ Աթոռին շուրջը կը ծածանի Ծիածանը:

Այս ճշմարտութիւնը աւելի եւս զգալի է նախախնամական կարգադրութիւններուն մէջ. Աստուծոյ աթոռը յայտնապէս կը տեսնուի մեր առջեւ, մարդկային պատմութեան սկզբնաւորութեան շրջանին մէջ:

Իրախտին մէջ մենք կը տեսնենք մեր նախահորց փառքն ու անկումը՝ իրենց անհնազանդութեան պատճառաւ: Իսկապէս սոսկալի վիճակ . . . Բայց ահա, աթոռին շուրջ թուրած ծիածանին նման կը փայլին ու կ'արձագանգեն Տիրոջ միեմարիչ խօսքերը: Աստուծոյ աթոռը իր վեհութեանը մէջ ի հանդէս կուգայ նաեւ Զրհեղեղի ժամանակ, երբ ամբողջ սերունդ մը ոչընչացաւ մեղապարտ: Յուսահատութիւնը ընդհանուր էր եւ կացութիւնը ողբալի, բայց հազիւ թէ ծովացած ջուրերուն տեղատուութիւնը կը հանդարտի, բնութեան եւ շնորհաց երկինքին վրայ կը ճաճանչէ ծիրանի գօտին, իբրեւ խոստում եւ խորհրդանշան սիրոյ, Նոյի եւ աշխարհի համար:

Աշխարհի վրայ ինչ որ ճշմարիտ է ժողովուրդներուն, նոյնը ճշմարիտ է նաեւ անհատներուն համար: Ո՞վ է այն մարդը, որ անիրաւութիւն գործելէ վերջ, ուշ կամ կանուխ չէ լսած իր խղճին սաստող ձայնը: Ո՞վ է այն մարդը որ չէ սոսկացած իր հակամարդկային ընթացքին հետեւանքները, տեսած ժամանակ, Բայց մեր մեղքերուն գիտակցութեան արդիւնքը եւ զոգ զգլման արդունքները որքան առատօրէն հոսին, նոյնքան կը փայլի ու կը շողշողայ ներումի, սիրոյ ու հաշտութեան ծիածանը, եւ իր ծիծղուն ու ծիրանեգոյն յոյսը սոխնքնելով զմեզ, երկնային ապահովութիւն մը կը ներշնչէ մեզի:

Մենք չարունակ կեանքի տեսականութեան մէջ անակնկալ ու իրերայաջորդ վիշտերու եւ չարչարանքներու կ'ենթարկուինք: Երկար է անոնց չարքը. — Զիզլքական վիշտեր, բարոյական վիշտեր, հոգեկան վիշտեր: Կեանքի ամենամուրբ եւ

ամենասիրելի կապերը կը խզուին իսկոյն, ու այդ խզումին պատճառաւ կը ստիպուինք ծանր ու անստնելի խաչեր կրել մեր ուսին վրայ, ու անընդհատ պայքար մղել՝ մեր ջախջախում գոյութիւնը ապահովելու համար: Սակայն պահ մը վեր բարձրացնէ մեր գլուխը. ա՛հ, ի՞նչ սփփանք. հոն վերը երկնակամարին կապոյտ պատտառին վրայ կիտուածանկարուած ծիածանը կը շողշողայ աթոռին շուրջ: Ապատութիւնը կը յատկանշէ ան, այսինքն բաժանումէն վերջ յաւիտենական միութիւն, խաչէն վերջ լուսապսակ, լացէն վերջ ծիծաղ, պայքարէն վերջ յաղթութիւն, աշխատութիւնէ վերջ հանգիստ, աքսորէ վերջ հայրենիք:

Այս ճշմարտութիւնը կը փայլի Գողգոթայի սրայոյց դէպքերուն մէջ: Աստուածային արդարութեան աթոռը ո՛չ մէկ տեղ այնքան սպառնալից եղած է, որքան Գողգոթայի կեղծեցուցիչ տեսարաններուն մէջ: Երբեք վրայ կը տեսնենք Սուրբը, Արդարը որ կը զոհէ իր անձը՝ մարդկութեան ազատագրութեան համար:

Հայրն է որ երկինքէն արդարութեան կայծակները կը տեղացնէ իր Որդւոյն վրայ, եւ Որդին ալ իր կարգին կը մահանայ բռնաբարուած օրէնքը ձերբազատելու համար: Այս իրադարձութիւններուն առջեւ կը սոսկայ բնութիւնն իսկ, եւ Պօղոս առաքեալ կը սարսափի. բայց դարձեալ Մեռեալ Փրկչին զխուճ վրայ կը ծածանի ծիրանին իբրեւ փառապսակ Շնորհաց եւ Սիրոյ: Արդարութիւնը եւ խաղաղութիւնը կը համբուրուին տանջանքի գործիքին վրայ, եւ այդ անարգ փայտը՝ ծիածանի լոյսով ողողուած՝ փրկութեան գործիք մը կը դառնայ:

Իստաստանի օրն ալ աքոռին շուրջ խոշորուած պիտի գտնենք Ծիածանը: Երբ Մարգար Որդին «պայ ի գատել գերկիր» պիտի բազմի իր զօրութեան եւ փառաց աթոռին վրայ: Անոնք որ միայն աթոռը պիտի տեսնեն, մահու եւ դատապարտութեան պատժին պիտի ենթարկուին իբրեւ փոխարինութիւն իրենց գործած մեղքերուն. իսկ արդարները Աթոռը եւ Աթոռին շուրջ

պիտի տեսնեն Միաժանր երկնիւրանդ, եւ անոր լոյսի փողփողումներուն մէջէն պիտի տեսնեն զմատառ գէմքը եւ յուսադրիչ ծիծաղը սնար, որ պիտի գոչէ. «Եկայք առ իս տմենայն վաստակեալք եւ բեռնաւորք եւ ես հանգուցից զձեզ»:

ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԳՈՒԼԵՄԵԱՆ

Բաղեշ

ԹԵՒԱԿՐԵՑ ՊԱՏՄԱՌԻՈՒԴՆԵՐ

ԿԱՄԵՑՈՂԸ ԼԱՐՈՂ Է

Մարդիկ քնդհանրապէս եկեղեցիներու մէջ ետեւի նստարանները զբաւելու միտում մը ունին եւ առջեւի կարգերը յաճախ պարտադ կը մնան: Շատ անգամ նոյն երեւոյթը կարելի է տեսնել երկաթուղիի կառքերուն եւ հանրակառքերու մէջ: Մարդիկ կարծես աւելի դիւրինով, աւելի քիչ զոնովութիւնով ձեռք բերուած յաջողութիւններով գոհանալու յոգեարարով են: Ասեւորական կեանքի մէջ ալ այսպէս է շատ անգամ: Բայց յաջողութեան պայմանը ետեւը մնալու յոգեարարուն մէջ չի կայանար: Խնարհ գիրքէ ու գործէ մը բարձրացող բարեկամ մը այս մասին իր անձին օրինակը պատմեց ինծի հետեւեալ խօսքով.

«Ես իմ տեւորական կեանքս սկսած եմ ուրիշներու հետ մրցելու: Բայց կամաց կամաց գիրքս կորսնցուցի եւ նոր գիրք մը ձեռք բերելու համար բաւական ջանքերու պէտք ունեցայ: Բայց այս շատ դիւրին բան մը չէր: Կը խորհէի թէ շատեր կան որ այդ գիրքը՝ չունին, եւ հաղորուորներէն մէկն էի եւ անոնց վրայ մասնաւոր առաւելութիւն մըն ալ չունէի, անոնցմէ որ եւ է մէկը իմ գրաւելիք գիրքս կրնար բռնել: Հետեւաբար աչքերս բացի ու տեսայ որ եթէ յոռաջ անցնիլ ու գիրք գրաւել կ'ուզէի, պէտք էր որ վաղէի, ու լատագոյնն ընէի. ինքզինքս անմիջական պահանջ մը ընէի այն գիրքին գորբունի կ'ուզէի: Որոշեցի մէկ խօսքով, ետեւը կարգէն առջիկա կարգերը անցնիլ, որ այս գիրքին գործ չէր: Բաւական սոյն-

թաքումներ ունեցայ, բայց հիմա նպատակակէտիս աւելի մօտ եմ՝ քան ինչ որ պիտի ըլլայի եթէ այդ օրոշումը չտայի ու այդ մաքառումը չփորձէի: Ու իմ անձնական փորձառութիւնովս կրնամ բաւել թէ՛ «բախա» ըսուածը ցնորք մըն է պարզապէս: Այն բանը որ միջակ դասակարգի պատկանող շատ մը մարդիկը յաջողութեան կը զբիւրէ, ոչ թէ նուազ «բախա» է, այլ նուազ «ճիգ»: Այս օրերը այնպիսի օրեր են որ՝ երբ մարդ մը գիրքի մը, յաջողութեան հանգրուանի մը կը հասնի, այդ ուրիշ բան մը չէ՝ եթէ ոչ սկզբնաւորութիւնը ուրիշ ճիգի մը, ուրիշ ձեռնարկի մը: Հոսանքն ի վար թիալարել հաճելի գործ մը կրնայ ըլլալ պարտապաշտօնի օրուան մը համար, բայց այդ կերպը չի յաջողիր գործնական եւ առեւտրական կեանքի մէջ»:

Այո՛, ասիկա «պայքար-կեանք» մըն է, ետեւս նստիլ մնալ սոջեւը անցնելէ դիւրին բան է, յանձնապատասխան եւ նախաձեռնարկ ըլլալ պէտք է բազմութիւնը ճիգքով առաջ անցնելու համար: Բայց ասիկա պէտք չէ չփոթել մեծամտութեան եւ անձնամոլութեան հետ: «Կամեցողը կարող է». ահա յարմարագոյն նշանաբանը օրուան ասպետներուն վաճառներուն վրայ գրուելու արժանի: Բայց հակառակն ալ շիտակ է. — Այն որ կը կարծէ թէ կարող չէ՝ կարող չէ:

Կեանքի ամէն մէկ ճիւղին մէջ, ամէն գործի մէջ, առաջին շարքերուն մէջ շատ տեղ կայ, որ կամքի տէր մարդոց կը սպասէ, պէտք է զէպ յառաջ փութալ ու զբաւել զայն: Ետեւը նստելու յոգեարար մէկը չի կրնար յաջողիլ:

«ԱՆՈՐ ՏԵՂ ԻՆՔ ՏԱՌԱՊԵՅԱԻ»

Միշտ «չափահաս» մարդոց մէջ չէ որ կը պատահին հերոսութեան հիմնալի գործեր: Յաճախ քաջ, ազնիւ ու անձնուէր գործեր կրնան պատահիլ նաեւ. սոյն չափահաս տղոց կամ աղջիկներու կողմէ կատարուած: Բայց տղու մը մասին հետեւեալ միջադէպը իմացայ.

Օր մը լսեցի թէ մեր վարժարանին աղոցմէն մէկը նախորդ օրուան իրիկունը տարուած է հիւանդանոց մը, որ մեր տունէն շատ հեռու չէր: Եւ արդէն այդ տղուն փայլուն դէմքը միշտ հետաքրքրած էր զիս, որով փափաքեցայ անոր այցելութիւն մը տալ հիւանդանոցին մէջ:

Երբ հարցուցի անոր թէ ի՞նչ էր իր հիւանդանոց գալուն պատճառը, ըսաւ թէ կատաղի շուն մը խածած էր զինքը: «Ես քրոջս հետ կը խաղայի», պատմեց ան, «ու խոշոր շուն մը մեր վրայ վազեց ու զիս բաւական գէշ կերպով ոտքէս խածաւ»: Այս էր անոր բոլոր պատմածը, բայց երբ հիւանդին սենեակէն կը մեկնէի, հիւանդապահուհին ետեւէս նրբանցքը եկաւ ու ըսաւ. «Վահան ձեզի բոլոր պատմութիւնը չպատմեց. ան շատ համեստ է պատմութեան մնացեալ լուսկոյն մասը պատմելու համար: Ես զայդ իր քրոջմէն եւ մօտերը գտնուող ուրիշ քանի մը մարդոցմէ լսած եմ: Երբ իրենց դրացիին այդ խոշոր շունը դուռին առջեւը անոնց վրայ յարձակեցաւ, ան Վահանի քրոջ նուարդին ետեւէն կը վազէր: Վահան տեսաւ թէ քոյրը շունէն պիտի խածատուէր՝ եւ թէ անմիջական օգնութեան չհասնէր: Հետեւաբար յառաջ վազեց, շունին եւ քրոջը միջեւ մտաւ, ու անոր տեղ ինք խածատուեցաւ: Յառաջ ցատկած պահուն թէիւ շունը վախճնելու համար բարձրաձայն սլօռաց ալ՝ բայց օգուտ չունեցաւ: Ան բաւական տառապեցաւ մինչեւ որ գործողութեան սրահը բերուեցաւ ու անոր վէրքը դարմանուեցաւ ու կապուեցաւ: Բայց ան այս բոլորին քաջութեամբ դիմացաւ ու նորէն ու նորէն ըսաւ. — Շատ ուրախ եմ որ նուարդ կըրցաւ աղատիլ շունին խածատումէն անոր համար շատ դժուար պիտի ըլլար այս բոլոր ցուերը քաշել: Զեզի պատմեցի այդ բոլորը՝ կարծելով թէ գոհ պիտի մնաք ամբողջ պատմութիւնը լսելով»:

«ԻՈՍՏՈՒՍՍ ՊԱՇԵՅԻ»

Յաջողութիւնը սուղ է՝ եթէ անոր

համար ստորին չափանիշերով վճարենք: Զախողումը պարտութիւն չէ՝ եթէ հաւատարիմ ըլլանք այն բաներուն, զորս իրեւ ուղիղ ու ազնիւ պիտենք:

Երբ ձոն Մորիսըն Ալապայի աւագուններուն մէջ ոսկի փնտռելու եւ իր սպագան շինելու համար տունէն կը բաժնուէր, մայրը այդ տեղին մէջ իր գաւազին սպասու փորձութիւններուն մասին իմացած ըլլալով, խնդրեց անկէ որ ժուկալ ու մաքուր կեանք մը անցընելու աշխատի: Տղան խոստացաւ:

Ամիսներ անցան ու անոնք շատ քիչ անգամ կը լսէին իրենց աղուն մասին: Վերջապէս ան դարձաւ հայրենի տունը, ու առողջութիւնը շատ միասուած էր ըսած նեղութիւններուն պատճառով: Ան բան մը չէր կրցած գտնել, հետեւաբար բախտ մը չէր կրցած չինել: Բայց երբ մայրը անհամբեր կերպով անոր երեսը կը կը նայէր, կրցաւ ըսել իր մօրը, «Մայր, խոստումս պահեցի, ո՛չ ոգիկից ըմպելի խմեցի, ո՛չ ալ բախտախաղ խաղացի»:

Ու մայրը մեծ ուրախութեամբ ըսաւ, «Այդ անբաղդատելիօրէն մեծ է այն բոլոր գանձերէն ու հարստութիւններէն զորս կրնայիք բերել ինծի, սիրելի զաւա՛կըս ձօն»:

(Թարգմ. Անգլիերէնէ)

ՀԱՅ ՔԱՀԱՆԱՆ

Ա.

ԻՐ ՆԻԻԹԱԿԱՆԸ

2.

Նախորդ թուով երբ կը խօսէինք քահանաներու նիւթական կարի աննպաստ վիճակին վրայ, աչքի տուցի ունէինք Պիւսոյ քահանայութիւնը:

Երբ քիչ մը տւելի ընդլայնենք մեր հայկացիին հորիզոնը, տարածելով մինչեւ մօտաւոր թէ հեռուոր գլխաւորները, պապականութիւն պիտի մեթագնի, նիւթական թէ իմացական տեսակէտով:

Նոր պատկերացու մով մը չենք ուզեր ժամանակ վաճառել, հաստատելու համար ինչ որ ծանօթ է արդէն, եւ ինչ որ պատկերացում է այս էջերուն մէջ սրտաճրմելի տողերով(1): Գաւառի քահանաներու մէջ կան որ իրենց վիճակին միակ դարմանը կը նկատեն «սեւնը քողոշը եւ քաշուիլ պաշտօնը»: Ուրիշներ կարծիք կը յայտնեն թէ քահանայական խնդիրը միանգամ ընդ միշտ լուծուած պիտի ըլլայ, եթէ հաստատուի ամսաթիւական գրութիւնը:

Անշուշտ համամիտ չենք կրնար պատուել անոնք, որոնք զստակարգին յուսահատ համազումին Պաշտօնէն հեռանալ, սքեմը ձգել, դասալքութիւն մ'է, որուն ինչ որ ալ ըլլայ՝ չպիտի յօժարէր պարտականութեան զգացումին եւ արժանապատուութեան տէր ու եւ է եկեղեցոյսն: Ընաց որ ատիկա չպիտի կրնար լուծել քահանայական խնդիրը, այլ ընդհակառակն պիտի ծառայէր չեղտելու ժողովրդային հակապիտիւնը այդպիսի դասալքներու նրկատմամբ: Հակակրութիւն որ պիտի ծառայէր ամբողջ եկեղեցական դասակարգին վրայ:

Այստեղանկերն քանի որ պատճառներ ունինք կտրուակելու ամսաթիւական գրութիւնէն յուսացումով զննական օգուտին ալ վրայ: Ամսաթիւական գրութիւնը կարելի եւ անհրաժեշտ է գործադրել պատուի աջ խղճալի անկիւնները, ուր ժողովուրդը ծայրաստիճան թշուառութեան մասնուած, ինքք նպատակ կը կարծուի, եւ ի վիճակի չէ ապրեցնելու հոգեւոր պաշտօնեայ մը, հետեւապէս ու եւ է քահանայ կը զօրկամակի երթալ ծառայելու այդպիսի լքուած անկիւններու մէջ, ուր ինքք եւ ընտանիքը բացառապէս թշուառութեան պիտի մատնուէին: Այո՛, անհրաժեշտ է այդ կարգի տեղեր ամսաթիւական պաշտօնեաներ վրկել՝ առաջին միջոցներով հոգացուելու պայմանով այդ թիւականը, բեռ չոյլալու համար հաղակարօտ համայնքներու վրայ:

Նոյն գրութիւնը կարելի եղած է գործադրել նաեւ արտասահմանի Հայ գա-

ղութներուն մէջ, ուր տեղացիներէ քահանայութեան յօժարողներ չեն գտնուիր, եւ անհրաժեշտ կը դառնայ ուրիշ տեղերէ քահանայ ճարել, որ քահանայաբար չընդունիր ուրէ պաշտօն իր երկրէն դուրս, առանց նիւթական բացարձակ ապահովութեան: Եւ արդէն զաղթագրութեան մէջ յորում Հայեր, իրենց միջավայրէն ազդուած, վարժուած կ'ըլլան այդ գրութեան(1):

Այդ երկու պարագաներէն դուրս, մենք չենք յուսար ամսաթիւական գրութիւնէն գործնական օգուտ մը:

Նախ, գործադրելի չենք գտնել այդ վրութիւնը Որչափ կը յիշենք, կովկասի մէջ, մասնաւորապէս Պաթում, փորձու եղաւ ատիկա, եւ մէկ երկու տարուան ապարդիւն փառքերէ ետքը, անկարելի ըլլալով ապահովել քահանայից ամսաթիւական փոխարէն յաւկացում հասոյթներու պանծումը, հարկ եղաւ վերադառնալ նախորդ գրութեան:

Տիար Է. Ի. Թ. Կաշմանեան Տաճարի 40-րդ թուով հրատարակուած գրութեան մէջ կ'առաջարկէր կղերին յաւկացումը բոլոր ուղղակի եւ անուղղակի հասոյթները բարդել եկեղեցոյ մայր հասոյթին վրայ, եւ թիւակ վճարել կղերին: Շատ գեղեցիկ գաղափար՝ տեսականին մէջ, զոր սակայն գործնականութիւնը կտրելի չըլլար արդիւնաւորապէս(2):

Պոյսոյ իբր քառասուն թաղերուն մէջ մենք չենք յուսար դոնդի նոյն իսկ միակ թաղ մը որ ննջեցեալի, կնուսքի, հարսնիքի եւն. քահանայական իրաւունքները

(1) Դիտելի է որ ամսական տար քահանաներ պահող Հայ գաղութները հազուադէպ կերպով կրնան տարիներով վայելել միեւնոյն Հոգեւոր Հովիւին պաշտօնավարութիւնը:

(2) Ասոր կարկնունդն մէկ օրինակն է «փոխան պնակի» գրութեանը, ամսական պատիկ գումարի մը վճարումը եկեղեցոյ մէջ պնակի շրջաբերութիւնը զաղրեցնելու համար: Գեղեցիկ խեղալ մը, որ շատ ծաղերու մէջ փորձուած բայց անյաջող եղած է, որովհետեւ ժողովուրդը որ ամէն շարժում տանոց մը կը ձգէ իւրաքանչիւր պնակի, չի յօժարիր ամսական 5 դրշ. վճարել կանոնաւորապէս ամէն ամսազխու:

անուուրին վերապահելով, յոժարի առնոյ
փոխարէն գոհացուցիչ ամսաթոշակ մը
յոտակոցնէլ քահանային: Այնքան ծան-
րաբեռնուած, բայց պիտեմէի մը վրայ ի՞նչ-
պէս կրնան նոր բեռ մ'ալ աւելցնել:

Բայց եթէ գործադրելի իսկ ըլլար,
մենք նորէն հաւատք չպիտի ունենայինք
այդ դրութեան օգտակարութեան վրայ:
Վարժապետութիւնը մեր աչքին առջեւ է:
Մեր մանուկներու ապագան, ազգի՛ն ապա-
գան իր ձեռքին մէջ ունեցող այդ դասա-
կարգը այսօր քահանայութենէն աւելի գո-
հացուցիչ վիճակ մը չունի զժառանգորդ
Մենք աղաներու, Հոգարարձոններու ձեռ-
քը գերի եղած, ո՛չ թոշակը ժամանակին
ստանալու վստահութիւնն ունի, եւ ոչ ալ
միեւնոցն վարժարանին մէջ գոնէ մէկ
քանի տաշի պաշտօնավարելու ապահո-
վութիւնը: Խաղալիկ անձնական հակառու-
կութիւններու եւ թաղային-կուսակցա-
կան վէճերու, տոռել քան երբէք խա-
խուտ, անկայուն վիճակ մը ունի ան,
անստոյգ մութ ապագայի մը տխուր հե-
ռանկարովը՝ սրտաբեկ(1):

Ահա՛ տմաականաւոր պաշտօնութիւն
մը, որ հոգի կը մաշեցնէ, սիրտ կը հառ-
ցնէ, աչքի լոյս կը թափէ ազգին զա-
ւակները կրթելու համար, եւ որուն ամ-
սաթոշակին համար անվիճելի կերպով
հաստատուն հասոյթներ կան, եւ սակայն
նոյնքան արգահատելի գիրքի մէջ կը
գտնուի որքան հայ քահանայութիւնը:

Հետեւապէս դրութիւնը չէ յանցաւորը,
այլ բարքերն են: Մեր ժողովուրդը դա-
ղափար չունի բարոյական ծառայութեանց
արժէքին վրայ: Մայր աստիճան նիւթա-
կանացած այս դարուն մէջ, նիւթական
չօշափելի բան մը կը փնտռէ իր տուած
գրամին համար:

Բարքի՛րը պէտք է փոխուին՝ աղնուա-
նան, ազգին իմացական կիանքին, բարո-
յական կիանքին, հոգեւոր կիանքին զար-
գացման ու բարձրացման աշխատողներու
արժանիքը գնահատուելու համար:

(1) Եթէ կան հազուադէպ կերպով բարեկեցիկ
ուսուցիչներ, նոյն համեմատութեամբ, եւ Երեւոյ
աւելի՛ ալ, կան բարեկեցիկ քահանաներ:

Դրութիւնը փոխուելու ո՛չ զիրու-
թիւն եւ նոյն իսկ հնարաւորութիւն կը
տեսնենք. մենք, ոչ ալ ո եւ է օգուտ՝
եթէ հնար ըլլար այդ փոփոխութիւնը,
ցորչափ ժողովուրդը գիտակցութիւնը
չունի իր պարտականութեան:

Ի՞նչ կարելի է ընել՝ ուրեմն՝ ներկայ
պարագաներուն մէջ: Մեր կարծիքն է թէ
փոխանակ հիմնական փոփոխութիւն մը
ընելու, պէտք է քարեփոխել միայն զայն:

Եթէ Հայ եկեղեցականութիւնը լատի-
նականին նման ուրոյն դասակարգ մը,
caste մը չի կազմեր, տարր կարեւոր պատ-
ճառներէն մէկն ալ իր ապրուստի ժողո-
վրդային նուէրով հոգալն է: Հայ եկեղե-
ցականը ժողովուրդով կ'ապրի, ուղղակի
ժողովուրդէն կ'ապրի. եւ հետեւապէս
ժողովուրդին հաւնար կ'ապրի եւ պէտք է
ապրի: Ասիկա խոշոր տուելութիւն մ'է,
եւ պէտք է հաստատուն մնայ, հոգ տար-
ուելով բառնալ անոր պղտիկ անպատե-
հութիւնները՝ նոր ըմբռնութիւններու համա-
ձայն:

Այդ անպատեհութեանց կարեւորագոյնն
է քահանային-քանի որ մեր խօսքը անոնց
վրայ է մասնաւորապէս — իր ժողովուր-
դին հետ զրամական խնդրոց առթիւ. ան-
համաձայնութիւններ ունենալը, եւ եր-
բեմն — թէեւ բարեբախտաբար հազ-
ուադէպ կ'երպով — ուղղակի ժողովուր-
դին զրամական պահանջ ընելը:

Իրատեւած է որ սուեւոյ հնէքի ժամա-
նակ, ոչ ալ պնակ կամ գանձանակ շրջա-
գայելու առթիւ, այդ կարգի վէճեր չեն
պատահիր. ինքզինքը գիտցող, իր եկեղե-
ցականի արժանապատուութիւնը պահող
քահանայ մը այդպիսի առիթներու մէջ —
եւ ուրիշ ո եւ է առթիւ — չի զիջանիր
բառ մը հանել բերնէն:

Կնուների, հարսների, ննջեցիւի առ-
թիւ միայն մերթ ընդ մերթ կը լսուին
զժգոհանքներ, կը պատահին շեշտուած
զրկանքներ: Եւ զիտելի է որ այդ առթիւ-
ներուն մէջ զրամական խնդրոյն կարգա-
դրութիւնը եկեղեցւոյ թագ. Խորհուրդ-
ներուն եւ կամ Պատրիարքարանի միջո-
ցաւ (գաւառներու մէջ ալ Առաջնորդա-

բանի միջոցաւ) կ'ըլլայ Արդ, շատ թաղեր որոշեալ սակացոյց մը չկայ, եւ կամ գրունուածն ալ թերի է այս կամ այն կողմէ: Օրինակի համար ննջեցեալի առթիւ սա- ներէց քահանաներու իրաւունքը ոչ մէկ սակացոյցի մէջ անցուած է: Այնպէս որ մինչ օտար թաղերէ հրաժարուալ քահանա- ներ որոշեալ սակացոյցին համաձայն, — եւ ննջեցեալի տիրոջ նիւթական կարողութեան համեմատութեամբ — իրենց սահմանուած իրաւունքը կը սահման թաղ. խորհուրդներու միջոցաւ, սաներէց քահանային վարձատրութիւնը՝ ննջեցեալի տիրոջ կամքէն, յօժարութենէն եւ պարտաճանաչութեան աստիճանէն կախում ունի, հակառակ որ ինքն է ի ժամու եւ ի տարածման անոր հոգեւոր պէտքերը մասակարարողը, ամէն յոգնութիւն կրողը: Ինչո՞ւ սաներէց քահանաներու իրաւունքն ալ ուրիշ պահանջներու հետ չգտնուի թաղային մարմնոց միջոցաւ, որպէս զի իր ժողովուրդին տունը այցելած ատեն մի՞ միայն հոգեւոր պարտականութեան մը կատարումը ունենայ իրեն նպատակ, առանց ու եւ է նիւթական նկատումի, վերաւանց ու կնկալութենէ:

Նոյնն է մկրտութեան ատենն ալ:

Նոյնն է պատկազրութեան ատենն ալ, սա տարբերութեամբ միայն որ այս պարագային քահանայից նիւթական վարձատրութեան ապահովութիւնը Պատրիարքարանի հոգաձուլութեան կարօտ կը մնայ (1):

Ամփոփելով ուրեմն այս մանրամասնութիւնները, մենք կ'ըսենք թէ, ներկայ պարագաներուն մէջ շատ բանաւոր եւ

զիրաւ գործադրելի կարգադրութիւն մը պիտի ըլլայ ուղղակի պաշտօնական մարմնոց միջոցաւ կասարեղ քահանաներու եւ ժողովուրդին միջեւ գտնուած դրամական հաշուոց կարգադրութիւնը, այն ամէն առիթներուն մէջ երբ նպատեհութիւն կայ:

Ասոր օգուտը կրկին պիտի ըլլայ:

Առաջինը եւ հակմը այն պիտի ըլլայ որ քահանան հարաւորեալ չափ յիշ անպահանջ նիւթական հաշիւ պիտի ունենայ իր ժողովուրդին հետ, վստահ ըլլալով որ պաշտօնական մարմին մը կայ որ կը պաշտպանէ իր արդար իրաւունքը, եւ ինքը պիտի կրնայ մնալ իր հոգեւորականի զիրքին բարձ. ութեան վրայ:

Երկրորդ օգուտը պիտի ըլլայ արգելել գեղծանոց քահանաների՝ ապօրէն եւ շահագիտական պահանջումներ ընելէ ժողովուրդէն. Պոյսոյ մէջ, յայց մանաւանդ գաւառային հեռաւոր խուլ անկիւններու մէջ, ուրկէ քահանայական տխուր շահատակութեանց յուրեր կը հասնին մերթ մերթ:

Քիչ մը բարի կամեցողութիւն, ուրեմն, կեղծ. պաշտօնական մարմնոց կողմէ, եւ քահանայային նիւթականի հարցը շատ կարեւոր քայլ մը առած պիտի ըլլայ գէպ իր վերջնական լուծումը:

Այս առաջարկին գործնականութիւնն անոր մէջ կը կայանայ որ պաշտօնական մարմնոց պիւստէին վրայ բնիկ մը իսկ չի բարդուիր, մինչ քահանայք նիւթական թէ բարոյապէս այնքան կ'օգտուին:

* *

Բայց ասիկա բաւական է արդեօք:

Քահանաները իրաւունք ունին ամէն պաշտպանութիւն պաշտօնական մարմիններէն ակնկալելու, եւ իրենք պարտականութիւն չունին իրենց վիճակին բարեւոքման համար ճիշդ մը ընելու: Բնական է թէ առաջին ճիշդ իրենք պէտք է ընեն, մասնաւորապէս նախկին օրինաւոր գրութեան վերածելով, կանոնի տակ տննելով ծիսատիրութիւնը: Բայց ամփոփ քահանայական մասնաւոր ժողովի մը մէջ լուրջ խորհրդակցութեամբ որոշուելը հարց մըն է եւ չենք ուզել ընթերցողը յոգնեցնել այլեւս քահանային նիւթականով, որո՞ւ մասին շատ իսկ խօսուեցաւ:

Յառաջիկայ յօդուածով մը պիտի ուզենք շօշափել իր բարոյականը:

ՋԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

(1) Տարօրինակ է որ, ինչպէս նախորդ գրութեան մէջ կ'ակնարկէինք, Ազգ. Պատրիարքարանը, Պատ. Տնօն. Խորհրդոյ կարգադրութեամբ, վերջ գնել կ'ուզէ քահանաներու պաշտպանութեան համար հինէն ի վեր ընդունուած գրութեան մը, մերժելով գանձել նշանախօսութեանց առթիւ քահանայից պատկերումը: Ազգ. Պատրիարքարանին ատրեկան մէկ բանի ոսկի հատոյցի ենթադրական յաւելումի մը յոյսն մամար, կ'արժէր հարուած մը տալ Հայ քահանայութեան, զայն զրկելով Ազգ. Պատրիարքարանի բարոյական պաշտպանութենէն, ժողովրդային անպարտաճանաչութեան շեշտուած բշտի մը մէջ:

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (1)

Խ.

«Մեծ նշանակութիւն չունին վարիչ դասակարգերու շարունակական ճիգերը՝ կեանքը աւելի հանգստաւէտ եւ հաճելի բնծայելու համար։ Ազգին աննշան մէկ փոքրամասնութեան ունեցած պալատները, գերիները ոչ մէկ փոփոխութիւն չեն բերեր ժողովրդի մասնաւոր մեծամասնութեան թշուառ կացութեան։ Այս վերջինը իր կեանքը քաջաշնչու համար աշխատութիւնն եւ մարդկութեան սէրը միայն ունի։ Մենք կ'ուզենք ինքզինքնիս, ինչպէս նաեւ մեր բարեկամներն ազատագրել ընկերային այսքան անտրդար կազմակերպութեան մը լուծէն։ Դուք ուրիշները կ'աշխատեցնէք ձեզի համար, ոչ թէ ի սէր համերաշխութեան, այլ ստիպման տակ։ Իշխանութիւնն ո՛րքան բռնակաւ է, նոյնքան նուազ է սէրը անոր հանդէպ։ Նոյնպէս մարդ ո՛րքան խուսափի աշխատութենէ եւ վարժուի պերճանքի, նոյնքան աւելի յոյլ եւ ծոյլ կ'անաւոր կը դառնայ, եւ հետեւապէս ինքզինքը կը զրկէ աշխատաւոր կեանքի մը միայն հայթայթած հաճոյքներէն եւ ճշմարիտ երջանկութենէն։ Մարդիկ ընդհանրապէս կը կարծեն նախազգուշական գործ մը կատարած ըլլալ, իրենց զաւակներուն համար գիրք մը պատրաստելով։ Այս ճշմարտութիւնն աւելի բացայայտ ընծայելու համար, օրինակ մը առնենք։ — Եթէ կ'ուզէք, որ եւ է պաշտօն մը յանձնեցէք ձեր զաւակին եւ իմ զաւակիս, ահա նոյնքան անոնցմէ ո՛րը լաւագոյն կ'երպով պիտի կատարէ զայն։ Ո՛չ, պէտք չէ արտադրել քնաւ աշխատակալի խօսքը թէ Բրիտանիայի կեանքն այն տառն միայն կարելի է երբ մարդ զաւակ չունի։ Ընդհակառակն, աւելի իրաւունքով պէտք է ըսել թէ հեթանոս կեանք մը ներքին է

անոնց համար միայն որ ընտանիք չունին։ Բայց վա՛յ անոր որ կը թշնամանէ այս պզտիկ ողաքներէն մէկ հասն իսկ»։

Յուլիոս լուռ, մտածկոտ մնաց, ու բաւական երկար խորհելէ հարբ ըսաւ։

— Այո՛, կրնայ ըլլալ որ իրաւունք ունենաս։ Բայց իրենց զատարարութիւնն սկսեալ է արդէն, Լաւագոյն ուսուցիչները տակաւին դասը կուտան անոնց։ Թող սորվին բոլոր ինչ որ գիտենք, ապիկոս չի կրնար փնտել իրենց։

«Ժամանակ ունինք առկաւին, եւ առնա՛ք ինձմէ աւելի։ Անոնք կատարեալ ազատութիւն պիտի ունենան Բրիտանիայի ինքզինքներէն, եթէ ուզեն, երբ տարիքին առնեն եւ կատարելապէս տիրանան իրենց մարդկայնական կարողութեանց։ Իսկ ես այդ բանը պիտի ընեմ այն առնէն, երբ իմ զաւակներուս բոլոր պէտքերը հոգացած եւ անոնց գիրք մը պատրաստած ըլլամ, այսինքն երբ որ կատարելապէս ազատ ըլլամ։

— Դուք ա՛յն տառն ազատ պիտի ըլլա՞ս, երբ ճանչնաս ճշմարտութիւնը, պատասխանեց Պամփիլիոս։ Բրիտանիայի կարող է չնորհք բաշխել, աշխարհի ուսուցումները չեն կրնար երբէք հայթայթել ստիկա։ Մնաք բարեաւ։

Եւ Պամփիլիոս միկնեցաւ զաւակին հետ մէկտեղ։

Բանտարկեալներու դատավարութիւնը կատարուեցաւ ժողովուրդին ներկայութեանը։ Յուլիոս տեսաւ Պամփիլիոսը, եւ զիտեց թէ ինչպէս ա՛ն եւ ուրիշ Բրիտանիաներ մեծ խանդով հաւաքեցին մարտիրոսներու մարմինները։ Բայց ինքզինքը վտանգելու երկիւղը արգիլք եղաւ իրեն՝ բարեկամին մօտենալու եւ զայն ճաշի հրաւիրելու։

Ժ.

Տասներկու տարի անցաւ։ Այդ միջոցին Յուլիոս կորսնցուցած էր իր կինը, եւ իր ժամանակը կ'անցնէր այն բոլոր հոգերուն եւ ձանձրութիւն մէջ զոր իրեն կը պատճառէր հանրային կեանքը եւ հետապնդութիւնը բարձր պաշտօններու, որոնց հասնելու համար պէտք եղած թե-

(1) Շար. 22րդ Թիւէն սկսեալ։

լերն հազիւ թէ ձեռք կ'անցընէր, եւ ահա քիչ յետոյ ձեռքէ կը հանէր զանոնք : Մեծագումար հարստութիւն ունէր եւ շարունակ կ'աւելցնէր զայն : Իր զաւակները չափահաս եղած էին եւ պերճանքի ու ցոփութեան մէջ կ'անցընէին իրենց կեանքը, մասնաւորապէս իր երկրորդ զաւակը : Երիտասարդն այս կերպով խոշոր խրամատներ բացած էր իր հօրը հարստութեան վրայ, որ կը սկսէր այլեւս արագօրէն նուազիլ, փոխանակ աւելնալու : Պայքարը կը շարունակուէր Յուլիոսի եւ իր զաւակներուն միջեւ, ճիշտ ինչպէս որ շատ տարիներ առաջ տեղի ունեցած էր իրեն եւ հօրը միջեւ : Միեւնոյն պայմաններով կը յատկանշուէր ան. հակակրօնութիւն, տախտիւթիւն, նախանձ : Աւելի ցաւալին այն եղաւ որ ճիշտ այդ միջոցներուն նոր փոխարքայ մը անուանուեցաւ, որ Յուլիոսը զրկեց կայսերական համակրութեան քոյր հաւատարմութիւնը : Անցեալ ժամանակներու կեղծ բարեկամներն անմիջապէս հեռացան Յուլիոսէն, որ արտորուելու վաին ունեցաւ : Հոռով գնաց յաջաարտութիւններ առլու համար, որպէս զի կարենայ վերահաստատուիլ առաջուան դիրքին մէջ, բայց զինքը չընդունեցին, այլ ընդհակառակն հրամայուեցաւ որ շուտով իր քաղաքը դառնայ :

Տարսոն դառնալուն ահաւ որ իր զաւակը խրախճանքի մէջ էր տանը մէջ, ըստորին բարքի տէր հազկատակներու հետ : Կիլիկիոյ մէջ զրոյց տարածուած էր թէ Յուլիոս մեռած է, եւ իր զաւակը հօրը մահը կը ածէր բարեկամներու հետ : Այս տեսնելուն, Յուլիոս ա'լ չկրցաւ ինքզինքը զսպել, եւ ծայր աստիճան զայրացած՝ մէկ հարուածով ոտքին տակն առաւ զաւակը, անկենդան գետին ձգեց զայն, ու իր հանգուցեայ կնոյ սենեակը քաշուեցաւ : Այդ սենեակին մէջ գտաւ ձեռագիր Աւետարան մը, որուն մէջ իր աչքերը սա' տողերուն հանդիպեցան.

«Ինձի՛ եկեի՛ բոլոր յոգնածներ ու բեռնաւորներ, ու ես հանգիստ պիտի տամ ձեզի» :

— Այո՛, ըսաւ Յուլիոս, չա'տ երկար

ժամանակէ ի վեր անկայ զիս կը կանչէ, եւ ես ահանջ չկախեցի իրեն : Անհրաժեշտ էր եւ վատթար կեանք մը վարեցի : Շատ ծանր է կրած լուծս, չարքի բեռը կը ճնշէր վրաս, կը առաւելեցնէր զիս :

Յուլիոս երկար տաւն նստած մնաց, ձեռապիրը ծունկին վրայ, մտածելով իր անցեալ կեանքին վրայ, եւ յիշելով ինչ որ Պամփիլիոս ըսած էր իրեն՝ քանի՛ քանի անգամներ : Վերջապէս ելաւ կանգնեցաւ, զաւակն քով գնաց զոր ոտքի վրայ դրտաւ, եւ մեծ եղաւ ուրախութիւնը՝ փախելով որ տուած հարուածը ծանրապէս չէր վիրաւորած իր զաւակը :

Առանց բաւ մը արտասանելու մեկնեցաւ տունէն, փողոց իջաւ, եւ ուղղուեցաւ դէպի այն ճամբան որ Բրիտանիաներու համայնքին բնակած աւանը կ'առաջնորդէր : Ամբողջ օրը քալեց, եւ վերջապէս իրիկունը կանգ առաւ զիւղացիի մը տունը ուր կ'ուզէր գիշերել : Իր մտած սենեակին մէջ անկողնի մը վրայ պառկած մարդ մը տեսաւ : Իր ոտնաձայնն անհանգիստ ըրաւ այդ մարդն որ ոտքի ելաւ : Յուլիոս ճանչցաւ այդ անձը, որ զինքը բժշկող ափսոսանքն էր :

— Ո՛չ, գոչեց Յուլիոս. ա'լ չես կրնար արդիւն զիս, իմ որոշումս ի գործ դնել : Այս երրորդ անգամն է որ կը փորձեմ իրադրութիւն բաղձանքս. եւ զիտեմ թէ հոն միայն պիտի գտնեմ հանգիստն եւ երջանկութիւնը :

— Ո՛ւր, հարցուց ափսոսանքը :

— Բրիտանիաներուն քով :

ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ

(Մնացեալը յաջորդող)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿՐԾՆ. ԺՈՂՈՎԸ ԲՆ. օր բացառիկ նիստ գումարեց, թեթեւեղութեամբ իր օրակարգին վրայ դիմում խնդիրները : Այդ նիստին մէջ ի նկատ առնելով որ Պուլկար Եկեղեցին կը զլանայ Հայ հիւանդներուն Ս. Հաղորդութիւն ստալ, եւ Հայ ննջեցեալները եկեղեցի ընդունիլ, որոշեց յանձնարարել Վառնայի Թաղ. Խորհուրդին, որպէս զի չըջանով Հայ քահանաները զրկէ

քահանայ չգտնուած տեղերը : — Որոշեց Գուրեան Ամին, Տ. Եղիշէ Ա. Արքեպի քննութեան յանձնել Դպրեվանքի ծրագիրը, եւ այդ մասին Պատ. Ուսումն. Խորհրդոյ եւ Տ. Գարեգին Մ. Վ. Կաշատուրեանի ուղղած գիտողագրերը : — Ամերիկահայոց Առաջն. փոխանորդ Տ. Պողոս Վ. Գաֆթանեան վարդապետութեան ընծայացու ներկայացուցած էր միապաւն Պ. Գէորգ Նազաւեանց, որ Դպրեվանքի աշակերտ եղեր է, այժմ համալսարանական : Որոշուեցաւ իր այդ դասանքին վրայ տեղեկութիւն ուղղել : — Ժողովը կարգաւոյժ հոշակեց Բաղեշի գիւղերէն Տ. Մարտիրոս քհն. որ հայր եւ որդի մը փայտով սպաննած եւ իր ոճիրը հաստատուած է պաշտօնական քննութեամբ : Նոյնպէս կարգաւոյժ հոշակեց Շապին Գարահիսարի գիւղերէն Տ. Սուքիաս քհ. Սարգիսեան, որ երիցունին մեռած բլլալով ուրիշ կնիք մը հետ կենակցիլը հաստատուած է : Որոշուեցաւ այդ պարագան չըջարեականով ծանուցանել ամէն կողմ :

*** Ժողովը Դ. Ե. Գրադեյաւ մէկ քանի ամուսնական խնդիրներով : Այդ նիստին մէջ ի նկատ առնուեցաւ քահանայական ատուր շահատակութիւն մը, զոր կը կատարէ եղեր Մայր Եկեղեցոյ աւագերէց Տ. Միքայէլ Ա. քհ. Աշճեան, ամէն կիրակի երեւակայական տնանկ աղքատներու համար ծանուցում ընելով եկեղեցւոյ բնմէն եւ պնակ շրջագայեցնելով : Ու ժողովը դեան ալիստի համար տուած ողորմութիւնը քահանայական հասցիներու մէջ կ'անցորի եղեր . . . Խնդիրը Թաղ. Խորհրդէն տեղեկացրուած էր Կրօն. Ժողովին որուն բոլոր անդամներն ալ բուն զայրոյթ յայտնած են այս գծուծ արարքին համար, եւ օրինակելի պատիմ պահանջած : Վերջնական քննութիւն մը սահմանափակ դատուած է սակայն, որ պիտի կատարուի այսօր (Շր.) Գումգալիուի մէջ :

Ա. Զ. Գ. ԺՈՂՈՎԻՆ անցեալ ուրբաթի նիստին մէջ Ատեն. գործողութեանց կարգին Ներսէս Էֆ. Օհանեան գրաւորապէս հարցում ուղղեց թէ Վարչապետին ներկայացող միջազգային պատուիրակութեան՝ Հայոց կողմէ ինչո՞ւ մասնակցած չէ Օսմ. Խորհրդարանի հայ անդամ մը : Նոյնը կը հարցնէր Վ. Թէքեան Էֆ., մասնաւորապէս գիտողութիւն ընելով աշխարհական պատուիրակ Միհրդատ Էֆ. Հայկազնի

համար : Իրենց բերանացի բացատրութեանց մէջ, Օհանեան Էֆ. քննադատեց Պատրիարքարանի անհոգութիւնը, մինչ Յոյները Պօօօի պէս յանդուգն երեսփոխան մը ընկերացուցած էին. իսկ Թէքեան Էֆ. Հայկազն Էֆ. ի հետ խնդիր չունենալով, եւ նոյն իսկ գնահատելով հանդերձ անոր աշխատութիւնները՝ ուրիշ գործերու մէջ, յայտարարեց թէ ան չէր կրնար օգտակար ըլլալ այս տեսակ պաշտօնական գիմումներու մէջ : Վարդգէս Էֆ. եւս բողոքեց թէ տեղապահը պատուիրակութեան ընկերանալու համար ոչ մէկ գիմում ըրաւ Օսմ. Խորհրդարանի հայ անդամներուն : Տեղապահ Ս. Բ. բացատրութիւններէն հտքը, թէ Ժամանակի սղութեան եւ իր զբաղած մէկ երկու նամակներուն պատասխան չստանալուն վրայ, Արշարունի Արքեպ. Հայկազն Էֆ. ի առաջարկեր եւ անոր հետ վացեր է, ատենապետին առաջարկութեամբ վիճարանութիւնը փակուեցաւ 25ի դէմ 30 քուէով : Հմ. Խոսրովեան եւ Ն. Օհանեան Էֆ. բողոքեցին ասոր դէմ, եւ վերջինն յայտարարեց թէ յոռաջիկայ շաբթու. հարցապնդում պիտի բերին :

Կարող. պատուիրակի ընտրութիւնը. — Յետոյ ժողովը անցաւ կաթող. պատուիրակի ընտրութեան, որ կատարուեցաւ 83 երեսփոխաններու մասնակցութեամբ : Աղեքսանդր Էֆ. Փանոսեան ստացած 34 քուէին, եւ 4 սպիտակ քուէի դէմ, Օննիկ եֆ. Չիֆթեաւաւ 45 քուէով ընտրուեցաւ կաթող. պատուիրակ :

Եկեղ. երեսփոխաններու վաւերացում մը օրակարգի Բ. խնդիրն էր, որուն ելք մը արուեցաւ աղմկալից վիճարանութիւններէ հտքը : Արիստ. Գառպարեան Էֆ. կ'առաջարկէր ընդունիլ ներկայ Նախաձեռնութեան Դիւանի տեղեկագիրը որ չեղեալ կը նկատէր կատարուած ընտրութիւնը, եւ նոր ընտրութեան հրահանգ տալ : Իրեն ձայնակցեցեան ուղղ. Թէրզեան Պարգեւ Փափագեան Էֆ. ներքեւ իսկ Տ. Հմայեակ Արքեպ. որուն կո ձայնակցէին Դ. Մովսէսեան, աղղ. Թիւրեան, Եր. Պէյագճեան Էֆ. ներքեւ, կ'առա-

Չարկէին նախորդ նախաձեռնութեան դիւանին եղբակցութեան համաձայն, հաստատել այդ բնութիւնը: Բուն վիճաբանութենէ մը ետքը, քուէի դրուեցան երկու բանաձեւեր: Ա. Գասպարեան եւ Եր. Պէյազճեան, եւ ներկայ երեսփոխաններէն (չատեր մեկնած էին արգէն) 15 ազատականներու ձեռնապահութեամբ, Ա. Գասպարեան բանաձեւին ստացած 14 քուէին զէմ 21 քուէով ընդունուեցաւ Ե. Պէյազճեան բանաձեւը, որով կ'առաջարկուէր նախորդ նախաձեռնութեան Դիւանին եղբակցութիւնը բնագոյնի վաւերացնել բացարձակ մեծամասնութեամբ ընտրուած 4 երեսփոխանները, իսկ համեմատականով ընտրուածներուն համար նոր ընտրութիւն հրահանգ տալ: Ըստ այսմ երեսփոխան հռչակուեցան՝

Տ. Գէորգ Արքեպ. Երէցեան

Տ. Գաբրիէլ Եպ. Ճէվահիրճեան

Տ. Ղեւոնդ Ծ. Վ. Դուրեան

Տ. Տիրայր Ծ. Վ. Մարգարեան:

Ազատական երեսփոխան մը, որուն հարցոյցինք իրենց ձեռնպահութեան չարժառիթը, պատասխանեց թէ՝ «Ամէն ամբաստանել իրաւունք ունի ինքնապաշտպանութեան, եւ քանի որ Ազգ. ժողովին մէջ երեսփոխաններ (Ա. Էսմէլեան, Գր. Ծ. Վ. Պալաքեան) ամբաստանած էին Երէցեան Ս. Եր. Պէյազճեան քուէի տալ Ե. Սրբազնութեան, որ ինք ալ իբրեւ ընտրուած երեսփոխան, ազգին գերագոյն ժողովին առջեւ կարենայ ինքզինքը պաշտպանել, եւ միանգամ ընդ միշտ վերջ տրուի խնդրոյն»:

ՊԱՏՐԱՐԻՍՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԹԱԳՐԻՐԻՆ պատասխանած է կառավարութիւնը: Ի մէջ այսոց կ'ընդունուի որ զինուորագրութեան օրէնքը ոչ-Իսլամներու լիզուով ալ հրատարակուի: Քրիստոնեայ ուսանողներ զինուորական վարժարան պիտի ընդունուին, սա պայմանով որ զպրօքին դասերուն հետեւելու չափ թուրքերէն դիտան, իսկ գիտութեանց ընտրութիւնը իւրաքանչիւր ուսանող իր լիզուովը պիտի տայ, գիտական բառերն եւ ասութիւնները թուրքերէն արտասա-

նելու պայմանով: Իւրաքանչիւր զօրարածին համար ամէն կրօնքէ մէկմէկ չըջնալ պաշտօնեայ պիտի նշանակուի. ոչ-Իսլամ զինուորներ որոշեալ օրերու մէջ իրենց ազգութեան զինները պիտի դրկուին, զինուորներու յաղարկարութիւնները՝ ստիպողական պարտաւորութեամբ մէջ՝ բանակին առնէն մօտ դանուած իրենց ազգականները պիտի կատարուին: Ուրիշ պայմաններ ալ յիշուած են, զինուորական նոր օրինագծին տրամադրութեանց համաձայն:

Կրթական խնդրոյն մասին նշանակելի են հետեւեալները: — Յարգ արաժնագիրը չունեցող ազգ. վարժարաններու թրտոնագիր պիտի տրուի: Նոյնպէս՝ նոր բացուած վարժարանի մը, Գպրոցներու մէջ աւանդուելիք դասերու ծրագիրը Պատրիարքարաններն ու Առաջնորդարանները պիտի պատրաստեն, ասոնք պէտք է ներկայացուին կրթական նախարարութեան. ցորչափ ծրագիր չփոխուի, հարկ չկայ ամէն տարի ներկայացնել: Ուսուցիչներու եւ ուսուցչուհիներու վկայականները երբ Պատրիարքարաններու եւ Առաջնորդարաններու կողմէ վաւերացուած են, թէ՛ կրթական նախարարութեան եւ թէ՛ Մէտրիքի պաշտօնեաներու կողմէ վաւերական պիտի նկատուին: Այժմ պաշտօնի վրայ գրանուած օտարահպատակ ուսուցիչները պիտի չարժեանքն պաշտօնավարել, բայց նախն. վարժարաններուն համար ասկէ վերջը չպիտի առնուի. իսկ անկէ վեր վարժարաններու համար ի հարկին պիտի կրնայ առնուի, սեղալին կառավարութեան գիտութեամբ: Ոչ-Իսլամ վարժարաններու վրայ կառավարութեան քննութեան իրաւունքը (հազար քեֆքիշ) նոյնութեամբ կը մնայ:

ԴԻՄՈՒՄՆԵՐ Ի Բ. ԴՈՒՍԵՆ. — Տեղապահ Ս. Եր. օր այցելեց Դատական եւ Ներքին գործոց նախարարներուն, եւ անոնց ուղարկութեան յանձնեց հայաբնակ զաւանդներու անապահովութեան, Հաւան Պէյլիի եկեղեցւոյն շինութեան, Ատանայի համար պիւտեքին մէջ աւելցուելիք 10,000 ոսկիի խնդրոյն, եկեղեցապատկան կառուածներդ սեփականութեան եւն. խըն-

գիրները, որոնց անյապաղ կարգադրու-
թիւնը պահանջեց. նախարարները խոս-
տացան այդ խնդիրներն ուսումնասիրել,
եւ ըր, կարելին ի դարձ գնել: Նոյն օրը
Ներքին դորձոց նախարարին այցելելին
Արմաշի փոխ-վանահայր Տ. Մխարազ Մ.
Վ. եւ Խնամակալութեան անդամ Տ. Գրի-
գորիս Մ. Վ., Յակոբ էֆ., Համամ ճեան եւ
գործակաւար Գամէր էֆ., եւ բողոքեցին
վանքին անապատներուն վրայ եղած ոսն-
ձգութեան դէմ: Նախարար ճէլալ պէյ
պատասխանեց թէ խնդիրն առանց ուսում-
նասիրելու չի կրնար պատասխան տալ: Տ.
Դեբեգորիս Վ. յետոյ Ղալաթիոյ Խորհրդա-
րանն երթալով, Տեղւոյն Ս. Հօր յայտնեց թէ
Խնամակալութիւնը պիտի հրաժարի,
եթէ Ազգ. Վարչութիւնը չկարենայ ար-
գելի իր աչքին առջեւ կատարուած այն
աւտիճան յայտնի անխառնութիւն մը:

* Օսմ. Խորհրդարանի Հայ անդամնե-
րը Դշ. իրիկուն Հայ ծիրակուտականնե-
րու հետ խորհրդ նխադր մը մէջ խորհրդակ-
ցեցան գաւառներու անապատութեան
հետ հողային խնդրոյն մասին արմատա-
կան դարման մը ձեռք բերելու համար:

* Խոյթի քուրդերը գործի վրայ են
դարձեալ: Մշոյ առաջնորդը կը հեռագրէ
թէ Հայու մը 300 ոչխարները յափշտա-
կած են, եւ կռակակալութեան մօտ եղած
զինուորները ապարդիւն մնացած:

ԵՐՈՒՍԱԿԱՆ Պատրիարքին ընտրու-
թեան մասին որոշում չկրցաւ տալ Խոյն
ժողովը Դշ. օր: Վարչական պատուերակ
Հաչկ էֆ. Խոճասարեան ծանրակշիւ յայ-
տարարութիւններ ըրած է ընթերցեաց
յանկի պատրաստութեան մասին, զոր
անարգանք մը կրճկատէ ազգ. իշխանու-
թեանց դէմ, ինչպէս թերթերու մէջ կը
կարդանք: Ժողովը վանքին նիւթական
մատակարարութեան տագնապալի վիճակը
ի նկատ առնելով որոշեց այժմէն կազմել
եւ Լ. մօից Հոգաբարձութիւն մը, անդա-
մակցութեամբ տեարց՝ Արամ Հալաճեան,
Հայկ Խոճասարեան, Մկրտիչ Մանուկեան,
Մինդան Մուրատեան, Յակոբ Էսաեան,
Ռուբէն Բարազեան, Սարգիս Գնաճեան:
Միւս կողմէ Ժողովը որոշեց հետադրել

Խոճասարեան էֆ. ի՞նչ առ այժմ մնալ Երու-
սաղէմ, եւ փութացնել Պատր. ընտրու-
թեան տեղեկագիրը՝ հանդիւժ յայտագրով:
Նոյնպէս որոշեց հետադրել որ Պատր. Տե-
ղապահ Տ. Դանիէլ Եր. անդամուս պէտք
է մնալ Երուսաղէմ:

ՀԱԼԷՊԻ նորընտիր Առաջնորդ Տ.
Ներսէս Եպիսկ. Դանիէլեան Կր պաշտօնա-
տեղին ժամանած եւ սիրալիր ընդունելու-
թիւն դտած է հասարակութեան ամէն
զասակարգէն:

ՄԱՐԱՇԷՆ Արժ. Տ. Հմայեակ ֆհնյ.
կը գրէ մեզ.—

«Տեղւոյն Ազգ. Կեդր. վարժարանը,
որ անցեալ տարիէն ի վեր միացած է
Հայ-բողոքականաց Ակադեմիային հետ,
այս տարի ալ միութեամբ պիտի կառա-
վարուի: Արձակուրդի օրերը աւարտած
են, եւ միացեալ վարժարանը վերստաց-
ուած Սեպտ. 14ին, նոր ծրագրով եւ ուղ-
ղութեամբ:

— Ազգ. Կեդր. վարժարանը, որուն
հաստատութիւնը 1880ին եղած է, քարու-
կիր ընդարձակ շէնք մ'է միայնակ, որուն
մէջ աշակերաք կը դաստիարակուէին Հին
Իւսթինի օրով պարագայից լսեմամբ վրան
չինել անհնարին եղած էր: Ողորմութեամբ
Աստուծոյ եւ Քաղաքական Ժողովոյ ջա-
նադիր կարգադրութեամբ Օգոստոս 15ին
սկսելով, յարկ մ'ալ փայտաշէն չինելու
ձեռնարկուեցաւ, եւ հիմա շէնքը աւար-
տելու մօտ է: Ութ սենեակներէ եւ խա-
շածեւ ընդարձակ սրահ՝ մը կը բաղկա-
նայ: Ութ հարիւր ոսկիի չափ ծախք պի-
տի երթայ: Շէնքը բարեպաշտ ու հաւա-
տացեալ ժողովրդին հանդանաութեամբ կը
կառուցուի»:



Արամատէր ՀՄԱՅԵԱՆ ԲԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԿԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԲԶՆՅ. ԿԵԶԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂՈՐՄԱՃԵԱՆ

ՕՍՄ. ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

شركة تجارية عثمانية

SOCIÉTÉ COMMERCIALE OTTOMANE

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻՒ 100,000 ՕՍՄ. ՈՍԿԻ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ Կ. ՊՈԼԻՍ

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Հ. Ա. Յ. Դ. Բ. Մ. Ա. Տ. ՈՒ. Ն.

ԳՐԱՄԵՆԵԱԿՆԵՐԸ ԱՌԺԱՄԵԱՅ ԿԵՐՊՈՎ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ՆՆ

ՍԽԱՆՊՈՒՂ, ԳԱԹԸՐՃԸՐՆԵՐԻ ԽԱՆ

Հայկական սոյն ղրամական հաստատութիւնը կ'ընէ փոխատուութիւններ՝ առեւտրական տոմսերու, մուրհակներու, փոխանակագիրներու, բաժնեթուղթերու, պարտաթուղթերու, ապրանքներու եւ բեռնագիրներու վրայ:

Կուտայ շէքեր, վարկագիրներ, փոխանակագիրներ եւ հետագրական վճարումի հրամաններ՝ ինչպէս թուրքիոյ նոյնպէս աշխարհիս բոլոր մասերուն վրայ:

Կը գնէ եւ կը ծախէ ամեն տեսակ բաժնեթուղթեր եւ պարտաթուղթեր, թէ՛ մեր եւ թէ՛ բոլոր օտար հրապարակներուն վրայ, ինչպէս եւ օտար դրամներ:

Կը գանձէ եւ կը զեղչէ առեւտրական տոմսեր, մուրհակներ, փոխանակագիրներ, բաժնեթուղթեր եւ կտրօններ:

Կ'ընդունի ղրամական աւանդներ նպաստաւոր պայմաններով:

Դրամատունս հաստատած է Առեւտր. տեղեկութիւններու համար լաւագոյն կերպով կազմակերպուած սպասարկութիւն մը:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՍՆՏՈՒԿ

Խնայողութիւնը մեր համայնքին մեջ քաջաշէնքով համար կ'ընդունի քանքիկնգ (25) դրուշէն սկսելով գումարներ

Դրամատունս կը կատարէ նաեւ, թէ՛ իր հաշուոյն, թէ՛ մասնակցութեամբ եւ թէ՛ ուրիշներու հաշուոյն ամէն տեսակ արդիւնաբերութիւններու եւ ապրանքներու գնում, վաճառում, փոխանակութիւն, ներածում եւ արածում:

Կ'ընդունի ներկայացուցչութիւն թէ՛ տեղական եւ թէ՛ օտար տուններու:

Կը կազմէ առեւտրական եւ ճարտարարուեստական ընկերութիւններ եւ կը մասնակցի անոնց: Կ'ընէ հանրօգուտ շինութեանց վերաբերեալ ամէն տեսակ ձեռնարկութիւններ:

ՍՏԱՑՈՒՄԻ ԳԻՐԲԵՐ

ՎԱՆՏՈՍԲ. — Կիսամյակային հանդես տոնմային, բանասիրական, գրական և գեղարվեստական ձգտումներով: Վանի մէջ հրատարակուիլ սկսած շահագրգռողական պարբերական մը, որուն Հոկտ. 5-ը Ս. Թիւին մէջ կ'երևան ծանօթ գրողներ՝ Խ. Լեւոնեան, Զիթունի, Ե. Ե., ամենէն սրտի մօտէ կ'տոնմային կեանքի և աւանդութեանց վերաբերեալ գեղեցիկ գրութիւններով: Այդ Թիւին մէջ կ'երևայ նաև, «Վանայ հին կառ խաչքէական պետութիւնը», Լինչի Արմենիայէն քաղուած Փափաքիլի էր միայն քիչ մը աւելի մաքուր և ինամուած ազգորութիւն: Տարեկան 24 Թիւի համար բաժնեգին՝ Թուրքիա 20 դր., Արտասահման 5 ու կէս ֆր. կամ 1 աօլար: Հասցէ՝ Խաչքէական ՎԱՆՏՈՍԲի, Վան:

ԲԺԻՇԿ. — Ամսաթիւն թշկական և առողջապահական: — Հրատարակուեցաւ

8 Թիւր, հետզհետէ աւելի շահագրգռողական և օգտակար պարունակութեամբ: Տարեկան բաժնեգին 20 դր.: Հասցէ Տֆր. Վանան Ղազարեան, Տրապիզոն:

ԳԱՂԱՑՈՒՄԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ. — Պարսկական հէքեթներէն: — Անգլիերէնէ թարգմանեց Ե. Վ. Երկարակեցեան, 1911 Նոր Ջուղա Տպ. Ս. Ամենափրկիչ վանքի: Պարսկական կեանքէ հետաքրքրաշարժ պատմութեամբ մը, սրտառուչ մանրամասնութիւններով: Գին 30 շահի:

ԿՈՂԱԿ շարաթաթիւնով, գոհութեամբ կը տեսնենք թէ այս շարժումը ընդարձակ է ծաւալը, և հետզհետէ աւելի շահական կը դառնայ իր պարունակութեամբ: Փափաքիլի էր միայն որ ուրիշ թերթերէ քառ առ քառ քաղուած լուր մը կամ տեսութիւն մը արտապուած ատեն, չմոռցուէր գրուիլ անունն այն թերթին ուրկէ քաղուած է, ինչպէս եղած էր այս անգամ Տաճարէն քաղուած հատուածի մը համար:

ԳԻՆ 1 ՂՐՈՒՅ

Տպագր. Տ. ՏՕՂԱՄԱՆԵԱՆ.

Սուրբան-Համալ Մօլա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ